

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր (այսուհետ՝ անձնագիր) տրամադրելու, փոխանակելու, անվավեր ճանաչելու, վերցնելու հիմքերը և դրանց հետ կապված այլ իրավահարաբերությունների կարգավորման հիմունքները:

Հոդված 2. Սույն օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու սահմանադրական իրավունքի օգտագործման (կենսագործման) երաշխավորումն է:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) անձնագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու (այսուհետ՝ քաղաքացու) ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար.

2) կենսաչափական տվյալներ՝ օրենքով սահմանված կարգով հավաքվող, պահպանվող և օգտագործվող անհատական տվյալներ, որոնք բնութագրում են քաղաքացու ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հնարավորություն են տալիս քաղաքացուն նույնականացնել (լուսանկար, ստորագրություն, աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմներ, սույն օրենքով նախատեսված դեպքերում աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմներ).

3) տվյալների էլեկտրոնային պահոց՝ անձնագրի տեխնիկական կառուցվածքային մաս, որը պարունակում է քաղաքացու սույն օրենքով նախատեսված տվյալները, այդ թվում՝ կենսաչափական տվյալները:

**Հոդված 4. Անձնագիր ձեռք բերելու իրավունքը և անձնագրի
վավերականության ժամկետը**

1. **Հայաստանի Հանրապետության քաղաքացին անձնագիր ստանում է կամավոր՝ անկախ տարիքից:**

2. Մինչև 16 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի **վավերականության ժամկետով**, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի **վավերականության ժամկետով: Ընդ որում, մինչև 16 տարեկան արական սեռի քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամանակով:**

3. Գործունակ քաղաքացին անձնագիր ստանալու մասին դիմումը ներկայացնում է անձամբ:

4. Առաջին խմբի հաշմանդամներն իրավունք ունեն անձնագիր ստանալու ներկայացուցիչների դիմումի հիման վրա: Այս դեպքում դիմումին կցվում է քաղաքացու հաշմանդամության վկայականը կամ վկայականի նոտարական կարգով վավերացված պատճենը:

5. Մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրվում է երեխայի ծնողներից մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչն անձամբ չի կարող ներկայացնել դիմումը, ապա ներկայացվող դիմումի վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով:

6. **Մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն: Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը:**

7. Անգործունակ ճանաչված քաղաքացուն անձնագիր տրամադրվում է խնամակալի դիմումի հիման վրա: **Սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացուն անձնագիրը տրամադրվում է իր դիմումի հիման վրա: Սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացուն սույն օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված առավել սեղմ ժամկետներում՝ գանձվող վճարի դիմաց, անձնագիր տրամադրվում է հոգաբարձուի համաձայնությամբ:**

8. Քաղաքացին անձնագիր ստանալու մասին դիմում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության մարմին, օտարերկրյա

պետություններում՝ Հայաստանի Հանրապետության որևէ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

Հոդված 5. Անձնագրի բովանդակությունը, ձևը, տրամադրելու (փոխանակելու) կարգը և ժամկետները, տրամադրելու (փոխանակելու) մերժման հիմքերը

1. Անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: Գտնված անձնագրերը Հայաստանի Հանրապետությունում ենթակա են հանձման Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

2. Անձնագրում հայերեն և անգլերեն լեզուներով ամրագրվում են քաղաքացու հետևյալ անհատական տվյալները՝

1) ազգանունը, անունը, ինչպես նաև հայրանունը՝ միայն հայերեն տարբերակում.

2) ծննդյան վայրը, օրը, ամիսը, տարեթիվը.

3) սեռը.

4) քաղաքացիությունը.

5) ազգությունը՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ.

6) բնակության վայրը (նշվում է միայն երկիրը):

3. **Անձնագրում ամրագրվում են նաև քաղաքացու լուսանկարը, քաղաքացու ստորագրությունը, ինչպես նաև արյան խումբը և ռեզուսը՝ առողջապահության մարմինների կողմից (քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ):** Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, իսկ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից նշում է կատարվում ամուսնության և ամուսնալուծության գրանցման մասին՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ, պաշտպանության ոլորտի համապատասխան պետական մարմնի կողմից նշում է կատարվում պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու մասին (զինապարտների համար)՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ: Անձնագիրը պարունակում է անձնագիրը տրամադրած ստորաբաժանման ծածկագիրը, ինչպես նաև անձնագրի տրամադրման և վավերականության ժամկետները, անձնագրի համարը:

4. Անձնագիրը պարունակում է տեխնիկական մաս՝ տվյալների էլեկտրոնային պահոց, որտեղ ամրագրվում են սույն հոդվածի 2-3-րդ մասերով նախատեսված

տվյալները, աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմները: **Աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմները սպանալը ֆիզիոլոգիապես անհնարին լինելու դեպքում վերցվում են աջ և ձախ ձեռքերի որևէ մտքի մատնադրոշմները: Եթե անձնագրում քաղաքացու կենսաչափական տվյալների ոչ լրիվությունը կամ ներկայացվող պահանջներին անհամապատասխանությունը պայմանավորված է քաղաքացու ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, ապա այդ մասին անձնագրում կատարվում է համապատասխան նշում:**

5. Երեխաների մատնադրոշմները վերցվում են **6 տարեկանից**, իսկ լուսանկարը՝ անձնագիր տալու յուրաքանչյուր դեպքում՝ անկախ տարիքից:

6. Անձնագիրը փոխանակելու դիմում ներկայացնելիս քաղաքացին պարտավոր է ներկայացնել փոխանակվող անձնագիրը, որում ամրագրված տվյալները տվյալ անձի վերաբերյալ առկա տվյալների հետ համեմատելուց հետո այն անմիջապես վերադարձվում է քաղաքացուն՝ բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի: Նոր անձնագիրը տրամադրվում է հին անձնագիրը վերցնելուց հետո: Քաղաքացու ցանկությամբ հին անձնագիրը վերադարձվում է դակելուց հետո:

7. Եթե օտարերկրյա պետությունում գտնվող անձը կորցրել է իր անձնագիրը կամ այն դարձել է օգտագործման համար ոչ պիտանի **կամ լրացել է անձնագրի վավերականության ժամկետը** և քաղաքացին չունի վավերական այլ ճամփորդական փաստաթուղթ, ապա օտարերկրյա պետությունում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը քաղաքացուն տրամադրում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք վերապահող փաստաթուղթ՝ վերադարձի վկայական կամ անձնագիր:

8. Եթե օտարերկրյա պետությունում, որտեղ գտնվում է անձը, Հայաստանի Հանրապետությունը չունի դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ, ապա քաղաքացին իրավունք ունի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից փոստով ստանալ վերադարձի վկայական կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ ունեցող որևէ պետություն մուտք գործելու իրավունք վերապահող փաստաթուղթ:

9. Անձնագիր ստանալու համար քաղաքացին ներկայացնում է՝

1) դիմում.

2) նույնականացման քարտ, իսկ մինչև 16 տարեկան քաղաքացին՝ ծննդյան վկայական.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված ինքնությունը հավաստող այլ փաստաթղթեր՝ սույն մասի 2-րդ կետով նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում.

4) զինվորական կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ **կամ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք** (զինապարտները).

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Անձնագիրը փոխանակելու համար քաղաքացին ներկայացնում է՝

1) դիմում.

2) փոխանակման ենթակա անձնագիրը.

3) զինվորական կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ **կամ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք** (զինապարտները).

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

11. Անձնագիր ստանալու (փոխանակելու) համար քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում լուսանկարվում **և հանձնում է մատնադրոշմները** ոստիկանության մարմնում, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում:

12. Անձնագիրը Հայաստանի Հանրապետությունում տրամադրվում (փոխանակվում) է դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրը կամ քաղաքացու ցանկությամբ առավել սեղմ ժամկետներում՝ գանձվող վճարի դիմաց: Գանձվող վճարի չափը և դրա դիմաց անձնագիր տրամադրելու (փոխանակելու) ժամկետը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից անձնագիրը տրամադրվում (փոխանակվում) է դիմում ներկայացնելու օրվանից 60-օրյա ժամկետում:

13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձը անձնագիրը Հայաստանի Հանրապետությունում հանձնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ: **Անձի ցանկությամբ հին անձնագիրը վերադարձվում է դակելուց հետո:**

14. Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ քաղաքացին հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրում, ապա դիմումն ընդունվում է և դիմումատուին առաջարկվում 5-օրյա ժամկետում համալրել այդ ցանկը և (կամ) հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում:

15. Անձնագիր տրամադրելը (փոխանակելը) մերժվում է եթե,

1) դիմումատուն 5-օրյա ժամկետում չի ներկայացրել սույն օրենքով պահանջվող փաստաթղթերը,

2) դիմումատուն 5-օրյա ժամկետում չի հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում:

16. Անձնագիրը տրամադրելիս քաղաքացուն վերադարձվում են սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով, սույն հոդվածի 9-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, տրամադրելը մերժելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով, սույն հոդվածի 9-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, **փոխանակելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով, սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**, փոխանակելը մերժելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով, սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

17. Անձնագրի, վերադարձի վկայականի ձևը և վերադարձի վկայականի տրամադրման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ սույն հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով նախատեսված դիմումների ձևերը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի նորմատիվ հրամանով:

Հոդված 6. Անձնագիրը փոխանակելու հիմքերը

Անձնագիրը փոխանակվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

- 1) քաղաքացին փոխել է բնակչության պետական ռեգիստրում իր վերաբերյալ գոյություն ունեցող այն տվյալները, որոնք սույն օրենքի ուժով ենթակա են ամրագրման քաղաքացու անձնագրում.
- 2) լրացել են մուտքի վիզաները փակցնելու համար նախատեսված անձնագրի էջերը.
- 3) լրացել է անձնագրի վավերականության ժամկետը.
- 4) անձնագրի մեջ առկա են ոչ ճիշտ տվյալներ.
- 5) քաղաքացին նման ցանկություն է հայտնել:

Հոդված 7. Անձնագիրը անվավեր ճանաչելու հիմքերը

1. Անձնագիրը անվավեր է ճանաչվում հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

- 1) լրացել է դրա վավերականության ժամկետը.
- 2) անձը դադարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելուց.
- 3) անձնագիրը կորել է.
- 4) անձնագիրը փոխանակվել է սույն օրենքով սահմանված կարգով.
- 5) անձնագիրը կեղծվել է.
- 6) անձնագիրը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ.
- 7) քաղաքացին անձնագիրը չի վերցրել այն ստանալու մասին դիմում տալու օրվանից մեկ տարվա ընթացքում.
- 8) անձը մահացել է:

2. Անձնագիրը կորցնելու դեպքում քաղաքացին այդ մասին հայտնում է ոստիկանության մարմին, այլ պետությունում գտնվելու դեպքում՝ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում անձնագիրը համարվում է անվավեր, իսկ 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում անձնագիրն անվավեր է ճանաչում ոստիկանության մարմնի որոշմամբ:

4. Մահացած քաղաքացու անձնագիրը հանձնվում է մահվան պետական գրանցումն իրականացնող մարմնին:

Հոդված 8. Անձնագիրը վերցնելը

1. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս պարտավոր են անձնագիրը վերցնել, եթե առկա են անձնագիրը անվավեր ճանաչելու սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ և 5-6-րդ կետերով նախատեսված հիմքերը կամ քաղաքացին օգտագործում է այլ քաղաքացուն պատկանող անձնագիր: ***Անձնագիրը վերցնելուց հետո անմիջապես քաղաքացուն տրվում է անձնագիրը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք: Տեղեկանքի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:***

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունում գտնվող քաղաքացու անձնագիրը վերցնում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը:

3. Վերցված անձնագիրը փոխանցվում է այն տրամադրած ոստիկանության մարմին, բացի սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերից:

4. ***Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը:*** Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագիրը վերցնում է զինկոմիսարիատը: Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և ***վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես:*** Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձի անձնագիրը վերադարձվում է ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո անմիջապես: Ազատագրված դատապարտված անձի անձնագիրը պահվում է պատիժը կատարող մարմնում և քաղաքացուն վերադարձվում է պատիժը կրելուց հետո անմիջապես:

5. Արգելվում է անձնագիրը վերցնելը (բացառությամբ սույն հոդվածում նշված դեպքերի) կամ գրավ ընդունելը:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում **2012 թվականի հունիսի 1-ից:**

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն ստանալ կամ փոխանակել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերը, եթե օրենքով սահմանված կարգով չեն դիմել անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու համար կամ դրանք չեն ստացել:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման համաձայն ստացված (փոխանակված) անձնագրերը համարվում են վավերական և Հայաստանի Հանրապետության տարածքում, և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ և 17-րդ մասերով և 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո եռամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ կողմից 2011թ. սեպտեմբերի 14-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», «Նույնականացման քարտերի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացություն
«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2, մաս 2	Անհրաժեշտ է ամրագրել օրենքով նախատեսված տվյալների փոփոխության դեպքում հանրային ծառայությունների համարանիշի փոփոխման արգելքը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 5, մաս 2	Անհրաժեշտ է հանել հոդվածի 2-րդ մասը, քանի որ այն կրկնում է 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, ինչպես նաև նախատեսել ծնողի ցանկությամբ բնակչության պետական ռեգիստրի կողմից մինչև 16 տարեկան երեխաներին հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է: 2-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչպես նաև փաթեթից հանվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

	Հոդված 6, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 6	Նախատեսել դրույթներ նույնականացման քարտերից (հանրային ծառայությունների համարանիշերից) և սոցիալական ապահովության քարտերից հրաժարված անձանց իրավունքների իրացումը երաշխավորելու համար:	Ընդունվել է. հոդվածը լրացվել է նոր մասերով:
	Հոդված 6	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՀՀ կառավարություն	Հոդված 2, կետ 2	Հոդվածի 2-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին:	Առաջարկությունն ընդունվել է. կետը խմբագրվել է:
	Հոդված 3, մաս 1	Անհրաժեշտ է ամրագրել նույնականացման քարտ ձեռք բերելու կամավորությունը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 3, մաս 2	Առաջարկվում է նույնականացման քարտ տրամադրել միայն ՀՀ տարածքում՝ ոստիկանության մարմինների կողմից:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 3, մաս 5 (նոր խմբագրությամբ մաս 4)	Առաջարկվում է դրույթը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:	Առաջարկությունն ընդունվել է. 4-րդ մասը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 2, կետ 6	Ընտրական վարչարարությունը արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է նույնականացման քարտում նշել նաև քաղաքացու մշտական բնակության վայրի հասցեն:	Առաջարկությունն ընդունվել է. լրացում է կատարվել 3-րդ մասում:
	Հոդված 4, մաս 4	Հոդվածի 4-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին:	Առաջարկությունն ընդունվել է. կետը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 5	Առաջարկվում է 5-րդ մասի դրույթն ամրագրել	Առաջարկությունն ընդունվել է:

		պողիտիվ նորմով:	
	Հոդված 4, մաս 6, կետ 5 (նոր խմբագրությամբ կետ 4)	Օրենսդրությամբ զինվորական հաշվառումը հավաստող փաստաթուղթ է համարվում նաև զինկոմիսարիատների կողմից տրամադրվող՝ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանքը, որի մասին ևս անհրաժեշտ է նշել նախագծում:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 4, մաս 8	Անհատական տվյալների տեղեկատվական բազաներում անձի նույնականացումն առավել արագ իրականացնելու նպատակով առաջարկվում է նախատեսել դրույթ անձի մատնադրոշմները վերցնելու վերաբերյալ:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 4, մաս 10	Առաջարկվում է նախատեսել քաղաքացիությունը դադարեցրած անձին նույնականացման քարտը դակելուց հետո վերադարձնելու հնարավորություն:	Ընդունվել է. 10-րդ մասը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 16	Հոդվածի 16-րդ մասն առաջարկվում է հանել, քանի որ նույնականացման քարտերի տեխնիկական բնութագրերն արդեն իսկ ամրագրված են գնման պայմանագրում:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 5, կետ 2	Առաջարկվում է նախագծից հանել օգտագործման համար ոչ պիտանի լինելու հիմքը, քանի որ արդեն իսկ նախատեսված է քաղաքացու ցանկությամբ նույնականացման քարտը փոխանակելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 6, մաս 2	Անհրաժեշտ է երաշխավորել նաև ազատագրկման դատապարտված քաղաքացիների՝ քաղաքացիությունը և ինքնությունը հավաստող փաստաթուղթ ունենալու իրավունքը:	Առաջարկությունն ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 7, մաս 1	Առաջարկվում է նույնականացման քարտը վերցնելուց հետո քաղաքացուն տրամադրել քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 7, մաս 4-5	Առաջարկվում է 7-րդ հոդվածից հանել 4-րդ և 5-	Առաջարկությունն ընդունվել է:

		րդ մասերը, քանի որ նշված անձինք նույնա-կանացման քարտերով ՀՀ տարածքը չեն կարող լքել:	
	Հոդված 8, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 8	Անհրաժեշտ է հստակեցնել՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացուն տրված անձնագիրը (մինչև տվյալ անձնագրի վավերականությունը լրանալը), օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կհանդիսանա արդյոք անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 8	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 4, մաս 1	Անհրաժեշտ է ամրագրել անձնագիր ձեռք բերելու կամավորությունը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 4, մաս 2	Վերնագիրը վերաբերում է անձնագիր ձեռք բերելու իրավունքին և անձնագրի վավերականության ժամկետին, ուստի առաջարկվում է, վերնագրին համապատասխան, հոդվածում նշում կատարել անձնագրի վավերականության մասին: Անհրաժեշտ է նախատեսել նաև սահմանափակումներ զորակոչային տարիքի անձանց անձնագրի գործողության ժամկետների համար:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 4, մաս 6	Անհրաժեշտ է նախատեսել մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրելու սահմանափակում այն ծնողի կողմից, ում մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:

Հոդված 4, մաս 7	Առաջարկվում է դրույթը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
Հոդված 5, մաս 2, կետ 7	Առաջարկվում է նախագծից հանել 5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը, քանի որ անձի նույնականացումը հնարավոր է իրականացնել այլ իդենտիֆիկատորներով (լուսանկար, ստորագրություն):	Առաջարկությունն ընդունվել է. կետը հանվել է:
Հոդված 5	Առաջարկվում է նշել, թե որ մարմնի կողմից է կատարվում համապատասխան նշում արյան խմբի և ռեզուսի վերաբերյալ, ինչպես նաև նախատեսել նշում ամուսնության և ամուսնալուծության գրանցման և պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու մասին:	Առաջարկությունն ընդունվել է. հոդվածի 3-րդ մասը խմբագրվել է առաջարկությանը համապատասխան:
Հոդված 5, մաս 4	Նախատեսել աջ և ձախ ձեռքերի ցուցամատերի մատնադրոշմները ստանալը ֆիզիոլոգիապես անհնարին լինելու դեպքում այլ մատների մատնադրոշմները վերցնելու հնարավորություն, ինչպես նաև երկրորդ նախադասությամբ նախատեսված դրույթն ամրագրել պոզիտիվ նորմով:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
Հոդված 5, մաս 5	Առաջարկվում է երեխաների մատնադրոշմները վերցնելու տարիք սահմանել 6 տարեկանը՝ նախագծով նախատեսված 5-ի փոխարեն:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
Հոդված 5, մաս 7	Անհրաժեշտ է նախատեսել Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք վերապահող փաստաթուղթ ստանալու հնարավորություն նաև անձնագրի վավերականության ժամկետը լրանալու դեպքում:	Առաջարկությունն ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
Հոդված 5, մաս 9, կետ 5 (նոր խմբագրությամբ կետ 4)	Օրենսդրությամբ զինվորական հաշվառումը հավաստող փաստաթուղթ է համարվում նաև զինկոմիսարիատների կողմից տրամադրվող՝ զինվորական հաշվառման փաստը հավաստող	Ընդունվել է. կատարվել են համապատասխան լրացումներ:

	Հոդված 5, մաս 10, կետ 4 (նոր խմբագրությամբ կետ 3)	տեղեկանքը, որի մասին ևս անհրաժեշտ է նշել նախագծում:	
	Հոդված 5, մաս 11	Անհրաժեշտ է սահմանել մատնադրոշմները վերցնելու վայրի վերաբերյալ դրույթ:	Ընդունվել է. կատարվել է համապատասխան լրացում:
	Հոդված 5, մաս 13	Առաջարկվում է նախատեսել քաղաքացիությունը դադարեցրած անձին անձնագիրը դակելուց հետո վերադարձնելու հնարավորություն:	Ընդունվել է. դրույթը խմբագրվել է:
	Հոդված 5, մաս 16	Անհրաժեշտ է նախատեսել նաև անձնագիրը փոխանակելիս քաղաքացուն վերադարձման ենթակա փաստաթղթերը:	Առաջարկության հիման վրա կատարվել է լրացում:
	Հոդված 6, կետ 2	Առաջարկվում է նախագծից հանել օգտագործման համար ոչ պիտանի լինելու հիմքը, քանի որ արդեն իսկ նախատեսված է քաղաքացու ցանկությամբ անձնագիրը փոխանակելու հնարավորություն:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 8, մաս 1	Առաջարկվում է անձնագիրը վերցնելուց հետո քաղաքացուն տրամադրել անձնագիրը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք:	Առաջարկության հիման վրա կատարվել է լրացում:
	Հոդված 8, մաս 4-5	Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ հետաքննության և նախաքննության մարմինը ժամանակավորապես վերցնում է այն կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, որի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը, սակայն նույն հոդվածի 5-րդ մասում նախատեսվում է, որ կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության և նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ: Անհրաժեշտ է հստակեցնել, թե որ դեպքերում կարող են նախաքննության և	Ընդունվել է. 4-րդ մասը խմբագրվել է, իսկ 5-րդ մասը հանվել է, քանի որ որպես անձը հաստատող փաստաթուղթ կասկածյալը և մեղադրյալը կարող են օգտագործել նույնականացման քարտը:

		հետաքննության մարմինները վերցնել կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը:	
	Հոդված 9, մաս 1	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 9	Անհրաժեշտ է հստակեցնել՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացուն տրված անձնագիրը (մինչև տվյալ անձնագրի վավերականությունը լրանալը), օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կհանդիսանա արդյոք անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 9	Առաջարկվում է նախատեսել օրենքից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետները:	Առաջարկությունն ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է խմբագրվող 195.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սանկցիաները սահմանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով, ինչպես նաև 1-ին մասի դիսպոզիցիան համապատասխանեցնել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի պահանջին:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 7	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է բնակչության պետական ռեգիստրում մշակվող անհատական տվյալների ցանկում լրացնել նաև կենսաչափական տվյալները:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 3	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Հոդված 2	Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2012 թվականի հունիսի 1-ը:	Առաջարկությունն ընդունվել է: